



European Bank
for Reconstruction and Development

Ծրագրի անփոփման փաստաթուղթ

Ծրագրի անվանում	Դինո Գոլդ կորպորատիվ վարկ
Երկիր	Հայաստան
Ծրագրի համարը	37490
Տնտեսության ճյուղ	Բնական ռեսուրսներ
Պետական/Մասնավոր	Մասնավոր սեկտոր
Խորհրդի կողմից քննարկման ամսաթիվ	Դեկտեմբերի 12, 2006
Կարգավիճակ	Անցել է հայեցակարգային ուսումնասիրությունը, սպասվում է Վերջնական ուսումնասիրություն
ԾԱՓ անգլերեն տարբերակի հրապարակման ամսաթիվ ԾԱՓ թարմացման ամսաթիվ	Նոյեմբերի 10, 2006
Ծրագրի նկարագրություն և նպատակներ	<p>Առաջարկվող ծրագիրն աջակցելու է Դինո Գոլդ Մայնինգ Քամփընի (ԴԳՄՔ) կողմից Հայաստանի հարավարևելյան շրջանում գտնվող Կապանի հանքավայրի և վերամշակման գործարանի վերանորոգմանը, մոդերնիզացիային և ընդլայնմանը, որն արդեն արտադրում է ոսկի, պղինձ, արծաթ և ցինկ կոնցենտրատի տեսքով: Փուլերով կատարվելիք ծախսումները կենտրոնանում են հանքահանման և շրջակա միջավայրի պաշտպանության ուղղություններով բարելավումների վրա: ԴՓՄ ձեռք է բերել հանքավայրը (տես ստորև) և այժմ մտադիր է զգալիորեն մեծացնել արտադրությունը:</p> <p>2005թ. դեկտեմբերին Բանկը հաստատեց 4.5 միլիոն ԱՄՆ դոլարի վարկ Ուղղակի վարկավորման ծրագրի (ՈՒՎԾ) շրջանակներում՝ տրվելիք ԴԳՄՔ-ին սարքավորումների ձեռքբերման նպատակով՝ որպես հանքահանման և շրջակա միջավայրի պաշտպանության ուղղություններով սկզբնական բարելավումների մաս:</p>
Անցումային ազդեցություն	<p>Գոյություն ունեցող ծրագիրն արդեն հասել է անցումային գործընթացի վրա ազդեցության գծով ձեռքբերումների՝ վերակազմավորման հաջողված օրինակի միջոցով: Սա էլ ավելի կզարգացվի առաջարկվող ծրագրի միջոցով՝ ԴՓՄ-ի հաշվետվողական ցանցի, համակարգերի և մենեջմենթի մեջ ԴԳՄՔ-ի ինտեգրմամբ: Ծրագիրը կշահի ժամանակակից հանքահանման տեխնոլոգիաների և պրակտիկայի ներդրումից՝ այսպիսով խթանելով տեխնիկական և մարքեթինգային հմտությունների</p>

փոխանցմանը: Նորացնելով գոյություն ունեցող հանքավայրը և գործարանը, ինչպես նաև հետագայում՝ թափոնների վերամշակման օբյեկտները, ծրագիրը նաև կբարձրացնի արդյունավետությունը և կբարելավի շրջակա միջավայրի պաշտպանության ապահովման պրակտիկան՝ հասցնելով դրանք շատ ավելի բարձր ստանդարտների:

Կապանի հանքավայրի և գործարանի արտադրական կարողությունների մեծացումը արտադրելու ավելի մեծ քանակներ, ավելի բարձր արտադրողականության և ցածր ընդհանուր գործառնական ծախսերի պայմաններում, կներկայացնի ուղղակի մրցակցություն շրջանում գործող այլ հանքավայրերի համար:

Հանքավայրն արդեն աշխատում է տեղի արդյունաբերական ճյուղի ու ճարտարագետների հետ որոշելու համար, թե ինչքան տեղական ռեսուրսներ կարող են օգտագործվել ընդհանուր արտադրական ծախսերի կրճատման նպատակով: ԴՓՄ-ը արդեն համոզվել է աշխատանքային և մատակարարների հետ պայմանագրային հարաբերությունների գծով լավագույն պրակտիկայի ներդրման անհրաժեշտության մեջ, որը կխթանի այս գործընթացը:

Ծրագիրը կարող է սահմանել նոր չափորոշիչներ մի ոլորտում, որը հաճախ բնութագրվում է մշուշայնությամբ և պատասխանատվության ու հաշվետվողականության բացակայությամբ: Կապանի հանքավայրի ու գործարանի գործունեության բարեփոխման համար շատ կարևոր եղանակ օբյեկտիվ հաշվապահական հաշվառման, պրոցեսների բարելավման համար ծախսերի-շահույթի գնահատման համակարգերի ներդրումը և առողջության պահպանման, անվտանգության ու շրջակա միջավայրի պաշտպանության ստանդարտների բարելավումը: Չնայած սկզբնական շրջանում տեղական բնակչության մոտ նկատվում էր որոշակի դժկամություն որդեգրելու արհեստավարժ մոտեցումներ, այժմ գրանցվել է զգալի առաջընթաց և բարելավում աշխատակիցների վերաբերմունքում և աճող հետաքրքրություն, թե ինչպես կարող են պրոցեսները ավելի լավ կառավարվել առևտրային սկզբունքների որդեգրմամբ և միջազգային պրակտիկայի ներդրմամբ: Ներկայացվող ծրագիրը կարող է զգալիորեն խթանել այս գործընթացը: ԴՓՄ-ն իրագործել է նաև մի շարք նախաձեռնություններ, որոնք օժանդակում են շրջանում սոցիալական կարիքների ու հարցերի լուծմանը, ներգրավում են տեղական համայնքը, խթանում են ձեռնարկատիրությունը, կանոնավոր կերպով տեղեկացնում են շահագրգիռ կողմերին հանքավայրի գործունեության առաջընթացի վերաբերյալ, խթանում են թափանցիկությունը:

ԴՓՄ-ի առաջարկվող ընդլայնումը նաև նոր ստանդարտներ կսահմանի, որոնք ուղղակիորեն կվերաբերեն նաև մոտակա այլ հանքավայրերի, որոնք դեռևս օգտագործում են հին և ոչ արդյունավետ տեխնոլոգիաներ: Օրինակ, էներգիայի խնայողաբար օգտագործման արդյունավետության ազդեցությունը տպավորիչ կլինի:

Շրջակա միջավայրի պաշտպանության մոնիտորինգի ու ստանդարտներին համապատասխանության նոր չափորոշիչները և տեխնոլոգիաների ու հմտությունների փոխանցումը դրական կազդեն նաև մատակարարներին և ծառայություններ տրամադրողներին նրանց հետ կապերի միջոցով, որոնցից այսուհետ կպահանջվի համապատասխանել նոր և ավելի բարձր ստանդարտների: Սա էլ ավելի կգարգացվի և կարտացոլվի գնումների պրակտիկայի շարունակական զարգացմամբ և

մոնիտորինգով:	
Հաճախորդը	Դինո Գոլդ Մայնինգ Քամփընի («Ընկերությունը» կամ «ԴԳՄՔ») հայկական փակ բաժնետիրական ընկերություն է, որի 100% սեփականատերն է հանդիսանում Վաթրին Ինվեսթմենթս ՍՊԸ («Վաթրին»), ընկերություն, որը հիմնադրվել և գրանցված է Բրիտանական Վիրջինյան կղզիների օրենսդրությամբ: Վաթրին ընկերությունը 2006թ. օգոստոսից ի վեր 80%-ով պատկանում է Դանդի Պրեշըզ Մեթըլզ Ինկ («ԴՓՄ» կամ «Ֆինանսավորող») կազմակերպությանը, որը հանքահանման կանադական ընկերություն է: Եվ ԴԳՄՔ-ն, և ԴՓՄ-ը Բանկի հաճախորդներ են:
ՎՋԵԲ կողմից ֆինանսավորում	25 միլիոն ԱՄՆ դոլար միջնաժամկետ վարկային ծրագիր
Ծրագրի ընդհանուր արժեքը	75 միլիոն ԱՄՆ դոլար, ենթակա է վերանայման դեպի բարձրացում
Ազդեցությունը շրջակա միջավայրի պաշտպանության տեսանկյունից	<p>Առաջարկվող ծրագիրը ներառում է գոյություն ունեցող հանքավայրը և վերամշակումը, այդ իսկ պատճառով շրջակա միջավայրի պաշտպանության աուդիտ է պահանջվել: Վարկի միջոցները օգտագործվելու են Կապանի հանքավայրի ու վերամշակման գործարանի վերանորոգման, մոդերնիզացիայի և ընդլայնման համար: Ներկայացված ներդրումային ծրագրին առնչվող շրջակա միջավայրի պաշտպանության հետ կապված հարցերն ու ռիսկերը կարող են անհապաղ բացահայտվել, գնահատվել և նվազեցվել, որի համար շրջակա միջավայրի վրա ազդեցության և պաշտպանության ապահովման վերլուծություն է պահանջվել: Վերոհիշյալ հիմքերով ՎՋԵԲ-ը դասակարգել է ծրագիրը B/1:</p> <p>Ուղղակի վարկավորման ծրագրի շրջանակներում որպես սկզբնական ծրագրի մաս հրավիրված անկախ խորհրդատու իրականացրել է շրջակա միջավայրի վրա ազդեցության և պաշտպանության ուսումնասիրություններ: Այս ուսումնասիրությունների արդյունքում Շրջակա միջավայրի պաշտպանության գործողությունների ծրագիր (ՇԳԾ) է մշակվել և համաձայնեցվել ԴԳՄՔ-ի հետ: ՇԳԾ-ի նպատակն էր կանխել և նվազեցնել շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները նոր օբյեկտների շինարարության և գոյություն ունեցողների շահագործման ժամանակ: ՇԳԾ-ը այնպես էր մշակված, որպեսզի ապահովվի հայաստանյան օրենսդրությամբ և կարգավորման դաշտով պահանջվող շրջակա միջավայրի պաշտպանության, առողջության պահպանման և անվտանգության (ՇԱԱ) ապահովման ստանդարտներին համապատասխանությունը և Ընկերության գործունեությունը ընդհանուր առմամբ բերվի միջազգային լավագույն պրակտիկայի մակարդակի: Սակայն հստակ գիտակցվում էր, որ Դինո ընկերության կողմից ձեռքբերումից առաջ շրջակա միջավայրի պաշտպանության պահանջների երկարաժամկետ անտեսման պատճառով հնարավոր չէր լիովին բավարարել ԵՄ ՇԱԱ չափորոշիչները: Շրջակա միջավայրի պաշտպանության մոնիտորինգը ցույց տվեց, որ ՇԱԱ հարցերը արժանացել ու արժանանում են մեծ ուշադրության և շրջակա միջավայրի պաշտպանության մի շարք պրոակտիվ միջոցառումներ են իրականացվում: ՇԳԾ-ի իրագործումը, որը ներառում է Շրջակա միջավայրի պաշտպանության վրա ազդեցության կառավարման համակարգի մշակում ISO 14000-ին համահունչ, աջակցվել է խորհրդատուների կողմից Տեխնիկական համագործակցության (ՏՀ) միջոցներով ֆինանսավորմամբ: Սկսվում է, որ առաջարկվող ծրագիրը թույլ կտա ներմուծել</p>

այլ զգալի բարեփոխումներ Ընկերության կողմից շրջակա միջավայրի պաշտպանության պրակտիկայում և հասնել ԵՄ ՇԱԱ չափորոշիչներին լրիվ համապատասխանության:

Շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում հիմնական խնդիրը թափոնների վերացումն է: ԴԳՄԶ-ի ղեկավարությունը դիտարկում է այս հարցը որպես գերակայություն և ներկայումս աշխատում է երկարաժամկետ և շրջակա միջավայրի պաշտպանության տեսանկյունից ընդունելի լուծման ուղղությամբ՝ մշակված շրջակա միջավայրի պաշտպանության միջազգայնորեն ընդունված չափորոշիչներին համահունչ:

Շրջակա միջավայրի պաշտպանության պրակտիկ միջոցառումները, որոնք ներդրվել են ԴԳՄԶ-ի կողմից հատկապես հանքահանման, հանքանյութի վերամշակման և շրջակա միջավայրի առումով վերականգնման ուղղություններում, սահմանում են լավ ստանդարտներ և կներդրվեն Հայաստանի այլ վայրերում ևս: Ընկերությունը Հայաստանում առաջին արդյունաբերական օպերատորներից էր, որ մշակեց Շրջակա միջավայրի պաշտպանության քաղաքականություն և ներդրեց շրջակա միջավայրի պաշտպանության կառավարման համակարգ՝ համապատասխանող ISO 14000 ստանդարտի պահանջներին: Առաջարկվող նոր ներդրումային ծրագիրը թույլ կտա իրականացնել ավելի արագ բարելավումներ և հասնել ԵՄ ՇԱԱ չափորոշիչներին ու միջազգային լավագույն պրակտիկային լրիվ համապատասխանության:

Ընկերությունը ծրագրի մասին կտեղեկացնի Կապանի հանրությանը՝ համաձայն հանրային տեղեկատվության հրապարակման վերաբերյալ Հայաստանի օրենսդրության պահանջների (դրույթների):

Տեխնիկական համագործակցություն

Օգտագործվել է 60,000 եվրո Ուղղակի վարկավորման ծրագրի (ՈՒՎԾ) շրջանակներում՝ Շրջակա միջավայրի պաշտպանության նախնական գործողությունների ծրագրի իրականացման և կատարելագործված ու ինտեգրացված Կառավարման տեղեկատվական համակարգի ներդրման աջակցության համար:

Տեխնիկական համագործակցության միջոցներով ֆինանսավորվող ծրագրերի ուղղությամբ խորհրդատվական ծառայությունների գծով հնարավորությունների համար այցելեք [procurement of consultants](#) :

Ընկերության կոնտակտ անձ

Դինո Գոլդ Մայնինգ Քամփընի ՓԲԸ

4 Գործարանային

Կապան

Սյունիքի մարզ

Հայաստանի Հանրապետություն

Ուղղել. գլխավոր տնօրեն՝ Մայքլ Սեքստոնին

Հեռ.: (+374) 028562040

Ֆաքս: (+374) 0285283671

Գործարար հնարավորություններ

Գործարար հնարավորությունների կամ գնումների գծով մատակարարման համար դիմել հաճախորդ ընկերությանը:

ՎՋԵԲ կոնտակտ անձ

Ծրագրի ղեկավար՝ Մարկ Ռախովիդես, rachovim@ebrd.com

Ընդհանուր հարցումներ

ՎՋԵԲ ծրագրին առնչվող հարցումներ (ոչ կապված գնումների համար մատակարարման հետ).

Հեռ.։ +44 20 7338 7168; Fax: +44 20 7338 7380

Էլ. փոստ: projectenquiries@ebrd.com

Ծրագրի անփոփոխ փաստաթղթի այս թարգմանությունը կատարվել է ԾԱՓ-ի անգլերեն տարբերակի հրապարակման ժամանակ: Անգլերեն տարբերակի թարմացման դեպքում հայերեն տարբերակը կմնա անփոփոխ: